


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՓԱՐ

Նամակ կամ որ եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՓԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
Վեցամսեայ 50
Օտար երկիրներ տարեկան ծախս 25
Վեցամսեայ 14
Թղթատարի ծախսը խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ կամ այլ գրութիւն եւ չի սրուիր:

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

Ասկէց ութ տասն օր առաջ անուշ պրտաւորանք մը ունեցանք: Տիար Բալաս կը հրաժարէր և մենք վայրկեան մը կարծեցինք թէ այս հրաժարականը բարեշրջում մը առաջ պիտի բերէր մեր ազգային տեղական գործերուն մէջ:

Ատենապետէն ետքը, կարող առնալ գարին պիտի գայ և անկէ ետքն ալ մնացածներուն, կըսէինք մենք մեզի, բայց, աւագ, մեր հաղթանք փորձերնիս մնաց, ինչպէս կըսեն ռամկօրէն:

—Այս քաղաքական ժողովին աթոռներուն վրայ ստանձ կայ, նստողը կը փակի, կըսէր անցեալ օր մեր բարեկամներէն մէկը: Անցեալ օրուան հրաժարականը ստոր մէկ ապացոյցն է:

Տիեզերքի մէջ ամեն բան իր շրջանը ունի. երկիրս իր առանցքին վրայ կը դառնայ, լուսինը մեր շուրջը, եղանակները իրարու կը յաջորդեն, երիտասարդութենէն ետքը ծերութիւնը, գիշեր և յետոյ առաւօտ, կեանքէն անմիջապէս ետքը մահը, ամեն բան իր շրջանը կընէ, կը փոխուի, մինակ մեր Քաղաքական ժողովն է որ անցէն չշարժիր, կը մնայ ուր որ է և չանհետանար: Ըսէ իրեն թէ իր սյդ-յամառութեամբ մեր օրէնքները կը բարկօծէ, կսպաննէ մեր սահմանադրութիւնը, դժգոհութիւն կը պատճառէ ժողովրդեան, չէ՛. այդ հինգ հոգիէ կազմուած Բարեւոյնը, պինդ և քննութեամբ մը որուն նմանը ուրիշ տեղ չենք տեսած, կը շարունակէ իր անտարբերութիւնը և անդդուելի կը մնայ:

—Օ՛, եզրագրական էտլոյաներ, պիտի ըսէր Գրիգոր Զօհրայ, թէ եւ Ալպեան այդ ծաղկին գոյնը ճիշտ հակառակը ըլլայ ասոնց երեսի գոյնին:

Եւ երբ շատ նեղը կը մնան, մանկական չքմեղութեամբ մը կը պատասխանեն ձեզի թէ,

—Փաշան ասանկ կուզէ կոր:

Փաշան, բայց մենք փաշա մը չենք ճանչնար որ մեր Սահմանադրութիւնը տանալիս ընելու իրաւունքը ունենայ. սյդ իրաւունքը Մաքսուտներու, Բարթոլոմէոսներու, և Ալքեաններու արուած է, որոնց կարգը դասերու ոճիրը կը գործեն մեր քաղաքական-ներք երբ կը պնդեն թէ Տիար փաշա չուզեր արգել այն Սահմանադրութիւնը որուն փա-

րիւ կը սիրենք իբրեւ միակ յենարանը մեր աշխարհայ գոյութեան:

Տիգրան փաշա, ցաւալի է ըսել, հայ ըլլալով հանդերձ, մօտէն չի ճանչնար մեր ազգը, հետեւաբար ամօթ է մեր երեսփոխաններուն և Քաղաքական ժողովի անդամներուն համար, երբ օգտուիլ կուզեն անոր անգիտակցութենէն:

Տիգրան փաշա այն աշխու և բարձր տիպարներէն է որ չի կրնար չի յարգել օրէնք մը որ չորս միլիոն ժողովրդեան մը բարօրութեանը համար յինուած է: Այդ օրէնքը մեր Սահմանադրութիւնն է որուն առջեւ պէտք է խոնարհին նոյն իսկ փաշաները, պէյերը և tutti quanti, երբ մանաւանդ հայ ըլլալը իրենց համար ամօթ մը չեն սեպեր:

Իրենց գոյութիւնը ապահովելու համար, մեր Քաղաքական պատկառելի ժողովին անդամները իրենց տարեշրջանը երկու մասի բաժնած են

1. Փաշան ըստի չըջան,
 2. Փաշան վերադառնայ նեխ չըջան:
- Այս է իրենց *modus vivendi*ն:

Եթէ ամեն բան փաշայէն կախում ունի, ուրեմն ի՞նչ չա՛հ ունին վայտէ մարդու գերը ստանձնելու մէջ: Թող վերնան իրենք մէջտեղէն և թող տան որ փաշան մինակը կառավարէ, և այն ատեն քիչ մը աւելի սահմանադրական պիտի ըլլանք ապահովապէս:

Խոստովանինք թէ Քաղաքական ժողովը կազմող անհատներուն հետ մենք գործ չունինք և իրենց անձնաւորութիւնը անտարբեր կը թողու զմեզ: Մեր չսիրածը, չի յարգածը այն ժողովն է որ իր ամեն մէկ նիստին մէջ բոլոր բոլոր կընէ Սահմանադրութիւնը՝ որ ամեն ժամանակեւ աւելի, այս պահուսն իրական է մեզ համար:

Մենք կը պահանջեն որ տուրք վճարենք տարուէ տարի ըստ Սահմանադրութեան՝ որուն գոյութիւնը գանձումներու ատեն մտքերնին կուգայ. բայց ըսէ իրենց թէ Քաղաքական ժողով մը վեց տարի շարունակ չի կրնար պաշտօնավարել ըստ Սահմանադրութեան, ո՛հ, այն ատեն իրենց *corde sensibile*ին կը կը դաշիս և կրակ կարած երեսիդ կը պուան:

—Սահմանադրութիւն նե՛ օշաճագ, էֆէնտիմ:

Եւ ուզեն չուզեն կամ Ալքեանը միտքը կուգայ և կամ Բարթոլոմէոսը:

Սակայն այս այսպէս չի կրնար շարուն-

անալ, և մանաւանդ պէտք չէր շարունանալ եզրագրութիւն պէս ազատ երկրի մը մէջ: Դասակարգ երեսփոխաններու և եղանակներէն Գաղաքական ժողովի մը ձևաբանացած ենք. ասիկայ ամօթ մըն է եզրագրութիւն հայութեան և պէտք է որ վերջ մը տրուի: Մինչեւ երբ պիտի շարունակէ Փաշան ըստի գրութիւնը, մինչեւ երբ:

ՀԱՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ⁽¹⁾

ՀԱՍՏԱՏԵԱԼ ԶԱՆԵՔԱՆԴՐՈՒ

Ի 8/20 Մարտի 1898

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Հայկական Մատենադարանին նպատակն է կազմել ըստ կարելոյն ամբողջ հայաստանի մը ամեն լեզուով հրատարակուած գիրքերու, հանդէսներու և թերթերու, որ Հայոց ազգին և երկրին հարաբերող նիւթերու վրայ կը խօսին:

Այս Մատենադարան ազգային անձնակազմով սեփականութիւն մ'է:

Նորո հիմնադրութեան տնօրէնութիւնը սկզբունքն ընթերցասիրական և ուսումնասիրական է ըլլալ: Խնամակալը պարտաւոր են հսկել որ այն սկզբունքն անվիճար պահպանուի, առանց ու եւ չեղում կրելու:

Յօդ. 2. Մատենադարանը պիտի ամփոփուի մասնաւոր արհիւ մէջ, որ պիտի ծառայէ նաեւ իբր ընթերցատուն: (Այս նպատակին յատկացուած է այժմ Առաջնորդարանի սենեակ մը):

Նորո հսկողութեան և մատակարարութեան հոգը կը վերաբերի ըստ պայմանաց ներքին կանոնադրի, երբ խնամակալներու, որոց մին՝ գրադատ:

Յօդ. 3. Խնամակալը պատասխանատու են Մատենադարանին պահպանութեան: Սոքա պարտաւոր են կանոնաւոր արձանագրութիւն ունենալ գրեւոր շարժման և գրասկզբ եղեւնուքին համար, և ամեն տարւոյ վերջ դադարեալ հաշուց և գրեւոր վիճակագրութիւն, Քննիչ Մասնակցի կողմէ յանձնուած եւ վաւերացած, հրատարակել ի ներկայութեան բաժանորդաց (տես յօդ. 9), զորս թողով պիտի հրաւիրեն յաւանդար ամսոյ մէջ:

Յօդ. 4. Ամեն հայ, որ կը վճարէ առնուազն, մի ամսական բաժնի համար, հինգ դաշեկան թարիֆա, Մատենադարանին բաժանորդ կը ըլինի:

Յիշեանա բաժանորդ են նաեւ որք կը վճարեն միանուագ՝ առնուազն հարաւ դաշեկան թարիֆա:

Պատուոյ բաժանորդ են նաեւ որք կը վճարեն միանուագ՝ առնուազն հինգ հարաւ դաշեկան թարիֆա:

Օտարազգիք ևս կընդունուին իբրեւ համակող բաժանորդներ, տոնոց ձայնի իրաւունք ունենալու:

Յօդ. 5. Բաժանորդը իրաւունք ունին մին-

(1) Այս ազգօգուտ հաստատութեան կանոնադրը հաստատուած է 1895 թ. ապրիլի 15-ին, առաջին պիտի վերապահելով աւելի ընդարձակօրէն խօսիլ Ալիք սանդրիոյ երիտասարդութեան այդ կարեւոր ձեռնարկին վրայ:

չէւ մէկ շաբաթուան համար փոխ առնուլ դոր- ծածուկեան յատկացեալ ու ինչ հատոր մը (ըստ պայմանաց ներքին կանոնադրի), մէկ շաբաթէն ա- լելիի համար պարտաւոր լինելով վճարել վարձք մը, անցնող իւրաքանչիւր շաբաթի կամ կտորակի հա- մար Այլ վճարում պիտի լինի մէկ դաշեկան թա- րիֆա կամ բազմապատկենքը, ներկայացունելով մօ- տաւորապէս գրքին արժողութեան չորս առ հարիւրն:

Փոխ առնուած հատորը պիտի վերադառնայ Մատենադարանին, անիփոխ վիճակի մէջ, ստաց- ման օրէն առ առաւելն մինչեւ մէկ ամիս յետոյ:

Յօդ. 6. Խնամակալը կը պաշտօնավարեն Հինգ տարի: Բացակայութեամբ կամ այլ պատճառաւ հը- րաժարողաց տեղ ընտրութիւնը կը կատարուին բն- ժանորդաց ժողովոյն կողմէ:

Յօդ. 7. Բաժանորդաց ժողովը կընտրէ նաեւ, տմեն տարւոյ սկիզբին, երկու անդամներէ բաղկաց- եալ քննիչ մասնախումբ մը, նոյն տարւոյ գրական և հաշուական վիճակագրոց և տուժարաց քննիչ- թեան համար:

Յօդ. 8. Ամսավճարներէն և վարձավճարներէն դուրս, կընդունուին նաեւ, շնորհակալութեամբ, գրա- կան և գրական նուէրներ, կտակներ, ևն:

Ստացագիրք պիտի ստորագրուին երկու խնա- մակներու կողմէ:

Յօդ. 9. Բաժանորդաց ժողովոյն կը մասնակցին նորա միայն օրը առ նուազն մէկ տարիէ ի վեր բա- ժանորդ են Մատենադարանին, և կը գտնուին յԱ- դըքսանդրիա խորհրդի գումարման միջոցին:

Ժողովն օրինաւոր կը համարուի երբ հրաւիրեալ բաժանորդաց առնուազն մէկ երրորդը ներկայ է:

Որոշումը կը տրուի պարզ ժողովականութեամբ, և կը գործադրուին խնամակալաց կողմէ:

Յօդ. 10. Ներկայութեանց թիւն անբաւական լինի, բաժանորդք պիտի հրաւիրուին երկրորդ գու- մարման մը, որ օրինաւոր պիտի համարուի, ինչ որ ալ լինի այս անգամ մասնակցողաց թիւն:

Յօդ. 11. Խնամակալը պարտին ուսումնասիրել ու ինչ գրաւոր առաջարկ որ տարւոյն ընթացքին մէջ կրնայ ներկայացուիլ իրենց՝ տասն բաժանորդ- դաց կողմէ, իրաւունք ունենալով դորձադրել կամ ենթարկել զայն յաջորդ տարեկան ժողովոյն որոշ- ման:

Յօդ. 12. Հայկական Մատենադարանի վարչա- կան ներկայ կազմակերպութիւնը լուծեալ պիտի չը- կատուի երբ Ադըքսանդրաբնակ բաժանորդաց թիւը տասնէ պակասի ինչէ՞ ցայնժամ, նորա բոլոր գոյ- քերուն անվթար պահպանութեան համար ապա- հովագրոյն միջոցները պիտի տնօրինուին ընդհանուր բաժանորդաց առ նուազն երկու երրորդին միաձայ- նութեամբ:

Յօդ. 13. Հայկական Մատենադարանին գոյու- թիւը պաշտօնական կերպով պիտի հռչակուի ալ- զային իշխանութեանց կողմէ, ներկայ 12 յօդուած- ներէ բաղկացեալ կանոնադրի վաւերացմամբ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թուրքիոյ ելմտական անձկութիւնը, բա- ւական լուրջ կերպարանք ունեցող պայքարի մը տեղի տուած է, Սուլթանին ու Բ. Դըան միջեւ:

Դըամ պէտք էր հասցնել Հիճազ, ուր ուխտաւորները կապստաւրէին առողջապահա- կան խտութիւններուն դէմ, դըամ պէտք էր թեսալիոյ բանակին համար, ու դարձեալ դըամ պէտք էր Գուրպան Պայրամի յաւել- ուածական ծախքերուն համար: Այդ ստիպու- ղական պէտքերուն առջեւ Բ. Դուռը թոյլ- տուութիւն խնդրած է Սուլթանէն 500,000 ոսկիի փոխառութիւն մը ընել Պանք Օթոման- նէն, պատերազմական տուգանքին հաշւոյն:

Սուլթանը բացարձակապէս մերժած է այդ առաջարկը, և նոր թախանձանքներու վրայ, նոյն իսկ վայրկեան մը պաշտօնէն հրա- ժարեցուցած է ելմտական գործոց նախարար Թէվֆիկ փաշան:

Այդ մերժումին պատճառն էր պատե-

րազմական տուգանքին մնացած մասը յատ- կացնել զէնքերու գնման և նաւատորմի լին- վերանորոգման:

—Երէկուրէն, այսինքն մայիս 3էն, պէտք էր սկսիլ թրքական բանակներուն թեսալիայէ քաշուիլը, որովհետեւ տուգանքին փոխառու- թիւնը պայմանագրողները ժողով գումարե- լով Բարիզի մէջ, որոշած են պէտք եղած դրամը հասցնել Յունաստանի՝ առաջին վճա- րում մը ընելու համար Դըան, և չյետաձգե- լու համար յունական հողին ազատուիլը:

Ուրեմն Սուլթանը կամ պէտք է ետ քաշուելու նախապատրաստութիւնները տես- նայ և կամ բացարձակապէս մերժէ պատե- րազմական տուգանքը, թեսալիան իրեն վե- լապահելը յայտարարելով:

—Յունաստանի Երկիրու թագաւորը, Ռուսիոյ առաջին գործոց նախարար Մուրա- վիէֆ կամին նուիրած է Փրկչի պատուանը- շանին մեծ խաչը:

—Բժշկական նոր խորհրդակցութենէ մը կը յայտնուի թէ Պ. Կլատթընի տկարութիւնը աւելցած՝ սակայն ցաւերը նուազած են:

—Սոֆիայէ կիմացնեն թէ Փէրսիան իշխանը հայեացքներու բարեկամական փո- խանակութիւն մը ունեցած է Սուլթանին հետ մակեդոնական խնդիրներուն վրայ՝ որու հե- տեւանօք ճամբայ ելլալէ առաջ հրաման տը- ւած է ամենամեծ խնամով հսկել սահմանա- գլուխը, անխորժ դէպքերու առաջքը առ- նելու համար:

Կը յիշուի թէ նմանօրինակ հրաման մըն ալ Սուլթանը տուած էր:

ԱՅԺՄԷՈՒԹԻԻՆ

ՄԱՆԻԼԻ ԵՒ ՔԱՎԻԴԵՅԻ ԾՈՎԱՄԱՐՏԸ

Առաջին շուրջ քաղիստմը Սպանիոյ եւ Ամերիկայի նաւաստովորներուն միջեւ, որ տեղի ունեցած է ոչ թէ Հաւանայի, ինչ- պէս կը կարծուէր, հապա Մանիլի առջեւ, սպանիական նաւաստովորի կասաբեայ պարսութեան շուրջ կը քերէ մեզի, կարգ մը հակասական հեռագիրներէ վերջ:

Ամերիկեան նաւաստովորը, որուն հրա- մանատարն էր Տեյլէյ ծովակալը, կը քաղ- կանաւ վեց զօրաւոր յաճաւորակներէ, միւնչ- դեռ սպանիական նաւաստովորը, ուր յա- ծաւորակներէ քաղկացած, շատ աւելի սկաւ էր անկայն:

Մանիլ պաշտպանուած էր սպանիական 12,000 կանոնաւոր զինուորներով, 2,000 սպանիացի կամաւորներով եւ 5,000 քնիկ- ներով:

Երկու շուրջ ծովամարտէ տեղի ունե- ցած են Մանիլի եւ Բալիդէյի ծոցերուն մէջ:

Սպանիական նաւաստովորը, հակառակ իր դիւցազնական դիմադրութեան, եթէ ոչ քոչորովի կործանած՝ գոնէ ու եւ գործ մը կասաբեայի անկարող վիճակի մը մեջ դրուած է:

Բալիդէյ գրեթէ արշուած է անքողոք- քեանք եւ Մանիլ կրակներու մէջ է:

Ամերիկացի ծովակալը առաջարկած է

Մանիլի կառավարչին, իրեն յանձնել քոչ- փիլանաւոր, քնդանօթներ եւ հեռագրա- կան ընդծովեայ պարանիս վարչութիւնը: Բայց կառավարիչը, յանդգնութիւնով մը որ շաւ կը ցուցնէ սպանիացիի մը ասպետա- կան վարմունքը, մերժած է ամեն զիջում եւ կտրած է հեռագրական պարանը:

Ուրեմն այս պահու, Մանիլ, կամովին անջատուած մայր քաղաքէն եւ միւսից ինք իր ուժերուն վրայ կոթնած, դիւցազնական դիմադրութիւն մը ընելու վրայ է:

Ամերիկեան նաւաստովորը անշուշտ վե- րական է ունիւկոմութիւնը: Բայց քաղա- քէն աւերելով պատերազմը չի շնչեալ, եւ տակաւին շատ մը սխուր ու արիւնք տես- րաններ պիտի պարգուին մեր աշխրհն առ- ջեւ, վերջնական պարսութեան առաջ:

ԱԶԳԱՅԻՆ

Առաջնորդական տեղապահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ, հետն ունենալով Տ. Մամբէ քահանան, կիրակի օր Պայրամի տօնին առ- թիւ, շնորհաւորական այցելութեան գնաց Բարձր. Խորվին որ սիրալիւ ընդունելութիւն մը ըրաւ իրեն:

Տեղապահ Հայրը, անձնական գործերու պատճառաւ երկուշաբթի օր Ադըքսանդրիա գնաց, ուր պիտի մնայ տասներեք օրի չափ:

Ուրախութեամբ կիմանանք թէ քաղաքիս ծանօթ վաճառականներէն և ազգային երեսփո- խանական ժողովոյ անդամներէն Տիար Բար- թիկ նահապետեան, գաւառական ընդհա- նուր ժողովոյ ղեկ-առնապետ կարգուած է փոխան հանգուցեալ Միհրան էֆ. Մէլիքեանի:

Հակառակ պոլսական մամուլի լաւատես լուրերուն, մասնաւոր նամակներէ կիմացուի թէ, ընդհակառակը, ծայրայեղ խտութիւն- ներու և ծանր պայմաններու կենթարկուին այն ամեն գաղթականները որ այս վերջի եր- կու երեք շաբաթներուն մէջ Պոլիս վերադառ- նալու փորձութիւնը ունեցած են:

ՏԵՂԱԿԱՆ

Գուրպան Պայրամի առթիւ Բարձր. Խը- տիվը փայլուն ընդունելութիւն մը կատարեց կիրակի առտու, Սպանիի պալատին մէջ:

Ընտրուած բազմութիւն մը խնուած էր պալատին ընդարձակ սրահներուն մէջ, սովո- րական շնորհաւորութիւնները ընելու համար:

Բարձր. Խորվին մօր և կնոջ ընդունե- լութիւններն ալ շատ փայլուն եղած են:

—Ինչպէս կը յիշուի, վաղն է որ Բարձր. Խորվը Ադըքսանդրիա պիտի երթայ, ամառ- ուան եղանակը անցնելու համար:

Նախարարները պիտի ընկերանան Ն. Բարձրութեան և յաջորդ օրը Գահիրէ պիտի վերադառնան՝ ամսուն վերջը միայն վերջնա- կանապէս Ադըքսանդրիա հաստատուելու հա- մար:

—Կըսուի թէ Սլաթին փաշա Օուտանէ վերադարձին հետը պիտի բերէ Էմիր Մահ-

մուտը, որ գերի բռնուած էր Աթպարայի պատերազմին մէջ:

—Առողջապահական ժողովին Հիմազէ ստացած մէկ հեռագրին համաձայն, Գուրպան պայրամի տօնը առանց միջադէպի կատարուած է այդ քաղաքին մէջ, ուր հասարակաց առողջութիւնը լաւ վիճակի մէջ կը գըտնուի: Ուխտաւորները քիչ օրէն ճամբայ պիտի ելլեն իրենց տեղերը վերադառնալու համար:

—Վաղը Աստանի հիւանդանոցէն՝ Սուտանէն վերադարձող խումբ մը վիրաւորուածներ Գահիրէ պիտի բերուին:

—Առաջիկայ հինգշաբթի օր Յունաց Երուկիոս թագաւորին անուան տօնախմբութիւնն ըլլալով, գահաբանական աղօթքներ պիտի կարդացուին տեղւոյս Այ-Եօրկի եկեղեցւոյն մէջ ուր պիտի պատարագէ Սօփրօնիոս Պատրիարքը:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Եւրոպական գրեթէ ամեն թերթերը զայրոյթով լեցուն յօդուածներ կը հրատարակեն Միացեալ Նահանգներուն դէմ: Փրանսացիներն ու իտալացիները բնական է որ իրենց համակրութիւնը ցոյց տան Սպանիոյ, ոչ միայն որովհետեւ անիկա իրենց լատին քոյրն է, այլ անոր համար որ արդի պատերազմը, բողոքականութեան և կաթոլիկութեան պատերազմն է աւելի իսկ մնացածները, բողոքականութեան և կաթոլիկութեան պատերազմն է օրթոտոքս, որոնք Անգլիոյ պէս ցեղակցական ու վաճառականական անքակտելի կապերով չեն զօգուած Ամերիկայի հետ, ապաքայ վտանգ մը կը տեսնեն Հին ու Նոր Աշխարհներու այս բաղխումին հետեւանքը: Կը վախճան որ օր մը Ամերիկա, աւելի ինքնավստահ և զօրաւոր, Եւրոպայի ներքին գործերուն ալ խառնուելու չ'սկսի:

Ահա թէ ինչպէս կարելի է բացատրել Եւրոպայի անհամակիր հայեացքները Միացեալ Նահանգներու մասին:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիական նաւատորմի յատկապէս անձնաթիւ մնալը շատ մտաւորաբար կը պատճառէ Ամերիկացոց: Կը վախճուի որ Միացեալ Նահանգներու հարաւային եզերքները ուժակոծեն յանկարծակի, և ատուր համար նախադրուական միջոցներ ձեռք կառնուին:

—Հայտնակ Մատրիոն ստացուած լուրերու, որոնք կապահովեն թէ Քուպա երկու ամսուան չափ պաշար ունի, կը կարծուի թէ սովը կը սպառնայ Հոմանայի թէ մանուսանդ ամերիկեան նաւատորմի կարենայ ծովային պաշարումը աւելի խտացնել և քուպայի տպաւորութիւնը ալ կալ ենան ներքին հաղորդակցութեան կապերը կտրտել:

—Վիէնայէ ստացուած հեռագիր մը կ'ընկած թէ սպանիական յաւաքող ամերիկեան նաւատորմի զօրձեալ կտրած անցած և անվաս Հովանայի նաւահանգիստը հասած են: Ուշերու այս կեդրոնացումը ենթադրել կուտայ թէ սպանիական նոր նաւատորմի մը միայն կը սպասուի, ներսն ու դուրսն յարձակելու համար պաշարող նաւերուն վրայ:

—Քուպայի ամերիկեան նաւատորմի միտնորու համար երեք առաջնակարգ զրահաւորներ ճամբայ երած են Սան-Ֆրանցիսկոյէն:

—Սպանիական 6000 զինուորներ մեկնած են Մատրիոնէ Գանարեան կղզիները զօրացնելու համար: Երեսուն նաւեր պիտի հետեւին իրենց, պաշտպանութեան համար:

—Ամերիկայի վախճումը որ Քէյ-Ուէյթը պիտի ըլլայ՝ սպանիացոց առաջին յարձակման վայրը, արագաշարժ նաւատորմի մը ճամբայ հանած են Սէն-Վէնսանէ մեկնող սպանիական նաւատորմի զինուորները համար:

—Ամերիկեան նաւ մը Չէնթուէնիոսի մարտկոցը ուժակոծած է, սղտիկ փնտներ պատճառելով: Թնդանօթակիր նաւերը զայն հարածած են:

—Մանիլը այրելու համար ամերիկեան նաւատորմի քարիւղոտ ուղիներ (obus à pétrole) գործածած ըլլալը, ընդհանուր պարտա մը առաջ բերած է ամեն կողմ:

Եթէ այդ լուրը կատարելապէս հաստատուի, Եւրոպայի մեծ պետութիւնները միտնալով ընդհանուր յարձակում մը պիտի ներկայացնեն Միացեալ Նահանգներուն՝ ժընէվի պայմանագրութեան հակառակ, քարիւղոտ ուղիներ գործածած ըլլալուն համար:

—Նիւ-Եօրքէ հեռագիր մը կը հաստատէ այն լուրը, որու համեմատ ապրիլ 25-է առաջ գերուած սպանիական նաւերուն ազատ արձակուիլը հրաժարած է եղեր Միացեալ Նահանգներու նախագահը:

—Սպանիական կառավարութեան ամեն դասակարգերու ուղղած ընդհանուր կոչին համակրութիւնով կը պատասխանուի ամեն կողմ, և կամաւորներու աշգին խումբեր կը կեդրոնացուին Մատրիոնի, Կարթագինէի, Ջիպրալթարի և Պարաքոնի մէջ:

Պաշտօնական շրջանակներէ կը հաւատուի թէ պէտք եղած ժամանակ Սպանիա պիտի կրնայ մէկ ու կէս միլիոն մարդ զինել:

—Եթէ խանդավառութիւն մը կը տրիք ամբողջ Մերսիկայի մէջ: Ահագին ցոյցեր կը կատարուին ամեն օր, խնդրելու համար կառավարութենէն որ աշակցի Սպանիոյ:

Եթեմադուար դրամներ կը հանգանակուին նախարարներու նախագահութեան տակ կազմուած յանձնաժողովի մը կողմէն:

Յանձնաժողովը ճամբայ պիտի ելլայ խնամակալ թագուհիին յանձնելու համար հաւաքուած գումարը որ 12 միլիոն բէգլայի կը հասնի:

Կը կարծուի նաեւ թէ այդ միջոցն յանձնաժողովը յարձակողական և պաշտպանողական դաշակցութիւն մը պիտի առաջարկէ Սպանիոյ:

Այդ հաւանականութեան առաջը առնելու համար ամերիկեան կառավարութիւնը օգնական զօրքեր կը զրկէ, Մերսիկայի սահմանադուրը ամրացնելու համար:

—Սպանիոյ մայրաքաղաքը շատ յուզուած վիճակի մէջ է վերջի պարտութեան լուրին վրայ:

Զինուորական ձիաւոր ջոկատներ կը պտըտին փողոցներուն մէջ, կարգապահութեան հսկելու համար:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՅՈՒՄՈՐՆԵՐ

Մասիս, 3 մայիս

Չարագուշակ գէպերու բերմամբ Մատրիոն քաղաքը պաշարման վիճակի մէջ դրուեցաւ: Երէկ, խուժանք ընթաց թատրոնը մոտայ ուղեց, ցոյց մը ընելու նպատակով թէ եւ ոստիկանութիւնը արգիլեց, բայց թատրոնին պատուհանները խորտակուեցան:

Բարիկ, 4 մայիս

Յորենին գինեղը բարձրանալուն պատճառով Քրանսական կառավարութիւնը արմատներէ մոխրաւոր չպիտի պահանջէ մինչեւ յուլիս 1:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Նորուբեան մը եւ անակցիկայի մը ամբողջ հրապոյր ունի այն ներկայացումը որ պիտի տեսնուի առաջիկայ կիրակի գիշեր, հայ դերասանական խմբին կողմէ, Ապու Խալիլ քաւոնին մէջ, ի նպաստ Պ. Շաւարժի եւ Պ. Նուանդ Բագանեանի:

Ընթուած խաղը ժօրժ 06-ի լաւագոյն գործերէն մեկն է, ԲՕՆԹԵՍ ՍԱՌԱ, գոր այդ ներկայացումն համար յաջողապէս քաւոնանաւ եւ հաւանքեղին թիկին Վիթինի Նուանդ, որ պիտի ստանձնէ միեւնոյն ասեմ Սաւայի դերը:

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ

(Շար. նախորդ քիւէն)

Այս քարափոր գերեզմաններուն մէջ այցելութեան ու յիշատակութեան արժանիները հետեւեալներն են:

1. Սեթի Ա.ի տապանը (1366 Ն. Ք.) որ ունի 150 ոտք խորութիւն և 500 ոտք երկայնութիւն: Այս տապանին երկու կողմերը զուգահեռական համեմատութեամբ շատ մը սենեակներ կան, որոնք քանդակուած են այլազան պատկերներով, բեւեռագրերով և արձանագրութիւններով: Ասոնք ամբողջ կը ներկայացնեն Փարաւոնի կենսագրութիւնը: 3200 տարիներ առաջ պատերուն վրայ փորագրուած պատկերներուն ներկերը տակաւին կը մնան այնքան թարմ ու գեղեցիկ, որ կարծես նկարիչը դեռ չաքաթ մը առաջ սկսած է իւր գործը և անաւարտ թողած է զայն:

Վերջի սրահին մէջ գտնուած ալապատուէ գեղեցիկ դամբանը որուն մէջ զետեղուած էր երեւմն Սեթի Ա.ի մոմիացեալ մարմինը, փոխադրուած է Լոնտոնի հնութեանց թանգարանը, իսկ մարմինը կը գտնուի այժմ Կիզէի Միզէին մէջ:

2. Ռամսէս Գ.ի տապանը (1200 Ն. Ք.): Այս տապանին երկայնութիւնն է 400 ոտք. երկու կողմի պատերուն և կամարին վրայ քանդակուած են պատերազմի ներկայացումներ, ընտանեկան, երկրագործական և ուրիշ տեսարաններ: Ռամսէս Գ.ի դամբարանը փոխադրուած է Բարիկ, դամբարանին կափարիշը Բէմպրիճ, իսկ մոմիան Կիզէի հնութեանց թանգարանը:

3. Ռամսէս Գ.ի և Զ.ի տապանները: Երկրորդը շատ հետաքրքրական է իւր աստղաբաշխական պատկերներով:

4. Ռամսէս Թ.ի տապանը, որ նշանուոր է իր քանդակներու և նկարներու զանազանութիւնով, որոնք բոլորովին տարբեր են միւս փարաւոնական տապաններէն: Հոս կը ներկայացուին յարութեան տօնարանները և հոգւոյ անմահութեան վարդապետութիւնները:

5. Ռախմարի տապանը, որ ամենէն հետաքրքրականն է իւր քանդակներով: Հոս կը ներկայացուին հարկատու երկիրներէ բերուած կապիկները, փղոսկիները և ամենէն ընտիր ապրանքներն ու գեղեցիկ պտուղները: Ներքին սենեակներուն մէջ աղիւսագործներու, պարանագործներու, որմնագիրներու, դարբիններու և ուրիշ արհեստաւորներու պատկերները քանդակուած են:

Թհէպիսի ամենէն հին գերեզմանատունն է Տրահ-Ապու-Նէքքեանը, ուր կան ԺԱՐԳ, ԺԷՐԳ և ԺԹՐԳ հարստութեանց տապանները: Հոս գտնուած են Անդէֆ Փարաւոններու դադաղները, որոնք կը պատկանին ԺԱՐԳ հարստութեանց (2500 Ն. Ք.): Հոս գտնուած են նաեւ Այիթիի թագուհւոյն դամբանը և հարեղէնները որոնք հիմա Կիզէի թանգարանին ամենաշքեղ զարդերէն մին կը կազմեն:

Պապէ-Մօլուքի ձորէն մեր ճամբան շարունակեցինք դէպի Տահ-Էլ-Պահրի տաճարը, և անցնելով Ապու-Էլ-Քարնէի բլուրներէն ու Լիպիական լեռներու սեպաձեւ ժայռերէն, ժամ մը վերջը հասանք տաճարին վայրը: Այս տաճարը շինած է Հաթասու թագուհին (1600 Ն. Ք.) որ Թոթմէս Գ.ի քոյրն ու միանգամայն կինն է: Շէնքին ձեւը բոլորովին տարբեր է եգիպտական միւս տաճարներէն և շինուած է

ամենագեղեցիկ մարմար-կրաքարէ: Տաճարին ճարտարապետը, Սէնմուծ, իր բարձր տաղանդին համար արժանացած է թագուհւոյն բարեկամութեան և իր գլխաւոր քարտուղարը եղած է: Հոս պեղումները դեռ կը շարունակուին:

Օրը տարածամած ըլլալով դարձանք նաև և հետեւեալ առտու այցելեցինք Մէտինէթ-Հապուի տաճարը: Այս տաճարը իրապէս կը բաղկանայ կրկնակ շէնքէ մը. հին շէնքին առաջին սրահը կառուցած է Թոթմէս Գ. և միւս սրահը Ռամէս Գ. Այնպէս կը կարծուի թէ այլ և այլ յաջորդ թագաւորներ յաւելումներ ըրած են շէնքին վրայ: Տեղ տեղ կը տեսնուին Պաղմէսու ժրգ, Սօթէր Բ. Պաղմէսու ԺԲ և Նեստիսիսու հռովմէական առնանները: Ռամէս Գ.ի շէնքին դիմացը ուրիշ շէնք մը կայ չորս քառակուսի աշտարակներով, որոնց չորս կողմերը զուգաշափաբար հակած են դէպի կեդրոնը: Ներքին սենեակները գեղեցկապէս զարդարուած են գունաւոր քանդակներով որ կը ներկայացնեն ընտանեկան և արքայական կեանքի տեսարաններ, որուն համար կարծողներ կան թէ այս շէնքը եղած ըլլայ Ռամէս Գ.ի պալատը:

Երբ աշտարակածեւ նախադռնէն ներս մտնենք, մեր առջեւ կը ներկայանայ Ռամէս Գ.ի տաճարը, որուն շքեղ քանդակներն ու նկարները կը ներկայացնեն Ռամէս Գ.ի պատերազմը Արաբացոց և Փիւնիկեցոց դէմ և Ամէն-Ռա (արեգ) չաստուածին արքայական զէնքերը իրեն նուիրելը:

Երկրորդ սրահին դրան վրայ գտնուած տեսարանները կը ներկայացնեն Ռամէս Գ.ի Սուրիայէն և Միջերկրականի եզերքներէն բռնած գերիներուն զոհուիլը, Ամին և Մութ չաստուածներուն առջեւ: Կըսուի թէ եգիպտական ամենէն թանկագին հնութիւնները կը պահուէին այդ սրահին մէջ: Ասկէց քիչ մը անդին կը գտնուի սինազարդ սրահ մը որուն երկու կողմերը շատ մը սենեակներ ու նրբանցքներ կան: Հոս կը տեսնենք Ռամէս Գ.ը իր զւաւկներով, ազնուականներով, բանակներով և թշնամիներով՝ որ կը ներկայացնեն մահու և կենաց թատերաքեմմը: Տեղ մը կը տեսնենք պատերազմի ահեղ ներկայացում մը և մեծամեծ յաղթութիւններ, տեղ մը սպաննուածներու արիւնոտ կոյտ մը, ուրիշ տեղ մը թշնամիներու կողմէն բռնուած գերիներու չղթայական քաշուիլ տարուիլը յաղթական կառքերու ետեւէն: Տեղ տեղ Լիբիացոց ապստամբութիւնը և ասիական եզերքներու յեղափոխական խլրտումները, քիչ մը անդին Փարաոնի յաղթական վերադարձը, իր թագադրութեան հանդէսը և չաստուածներու նուիրած զոհերը: Հոս ծովային պաշարում մը, հոն զօրախումբ մը որուն մէջ կանգնած ինքը Ռամէս Գ. կաղաղակէ. «ահա անոնց սահմանները առի իմ երկրիս համար, անոնց քաղաքները կործանեցի, անոնց հունձքերը այրեցի, և ոտնակոխ ըրի անոնց ժողովուրդը: Ուրախացի՛ր ո՛վ Եգիպտոս, բարձրացուր քու ձայնդ մինչեւ երկինք, որովհետեւ ահա ես կը տիրեմ բոլոր բարբարոսաց երկրին, ես՝ Ռամէս Գ. թագաւոր վերին ու ըստորին Եգիպտոսի»:

(Շարունակելի) 80թ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Ա. Զ. Դ

Ճարտարապետ Պողոս Խտրեան, վկայեալ Պալատի գեղարուեստական վարժարանէն, ճարտարապետական գրասենեակ մը բացած է Մուսրի փողոց, ժամագործ Գրամէր ընկ. ղէմի շէնքին երկրորդ յարկը: Կը ստանձնէ շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամէն տեսակ ճարտարապետական յանձնարարութիւններ: Նստել փափաքողներուն գծա գիտութեան և ճարտարապետութեան մասնաւոր գասեր կուանդէ:

Գրասենեակը բաց է ամէն օր առաւոտեան ժամը 8էն 12 և 2էն 7 (յ.մ.) 5-10

Դ Ի Մ Ե Ց Է Ք

Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ԳԱՀԻՐԷ Մուսրի փողոց ԳԱՀԻՐԷ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ արանց կանոնց 120 դր. և մինչեւ 2500 դր.

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.

Եթէ կուզէք նիքէլ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.

Եթէ կուզէք պտտի և բոստօրի թաղանթան բանտիւններ գաղղիական եւ ամերիկեան

Եթէ կուզէք նորածեւ չղթաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպաւս

Եթէ կուզէք այլ և այլ գոհարեղէնք աղանձնողեայ, ոսկի, արծաթ, ոսկեպաւս

Դ Ի Մ Ե Ց Է Ք

Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 8-20

PHARMACIE DE LA POSTE
ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական բուսական գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգղիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ հանգային ջուրեր, անուշահոտութիւնք եւն. բնաւորական և մանրադիտական քննութիւնք: Դեղարանը կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողները:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար: 47-50

Ա. Զ. Դ

Պ. Յակոբի կազմակերպած դաւանակի միմակահանութիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ մայիս 8ին, կիրակի օրը: 3-4

ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԵԼ ԿԻՆԵՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արգոյ հասարակութեան թէ ամառս Ալի սիւսեալ գնած ենք Տարալ-Է-Կինէնայի Հայկական փուռը և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները: Այդ փուռին գործելու եղանակին մէջ խնամատ քարեկարգութիւններ ներմուծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունեւորութիւն մը պէս լիւզի գոհացնել իրենց վատահոթութեամբ զմեզ պատուող յաճախողները:

Կը սիրենք յուսալ որ պատուական ազգայինք զմեզ պիտի քաջաբերեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ս. Զուրիկեան եւ Նիքարի Հացագործեան 12-15

ՃԱՇԱՐԱՆ “ԼՈՒՍԻՆ,”

Քրէտի Լիօնէի բովընտի փողոցը Արեւ ճաշարանի ճիշտ գէղը նոր բացուած այս հայկական ճաշարանին մէջ յաճախողները պիտի գտնեն ընտիր սնունդ, կերակուրներու պէտքաւորութիւն, խոր նամեալ մաքրութիւն, փաթկոտ սպասարկութիւն և զիրամատչելի գիներ:

Ի մտոյ նոր ճիւղ մին ալ պիտի տեսչուի զառնարի և Քեպպալի 3-8

ՍԱՓՐԻԶ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահիրէ հաստատուած է և մեծապէս դո՛հ թուողցած իր յաճախողները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրու-թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիւմն և թէ վարտայարդարութեան մասին:

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱՅԻՐԱՆՑԻՍԸՄԱՆՆԵՐԻ 8-10

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ,” ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր ՈՒՒՆ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԻ ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻԲԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի օր և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութոյ կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարտեր եւ տուներու

Տպարանը բաց է ամէն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, չրջագոգեստներ, ևն. մաքրութիւն, ճշգրտագոհութիւն, և խիստ չափաւոր գին:

16-24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ րազրի